

Արձանագրություն N15

2025 թվականի մայիսի 6-ին ժամը 16.00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

Նիստն անցկացվեց ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Վ. Մխիթարյանի նախագահությամբ: Վերջինս նշեց, որ հանդիպման նպատակը նիստի օրակարգում ներառված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմին ուղարկելու հետ կապված հարաբերությունների և արտարժույթով արտահայտված գործարքների շրջանակներում հարկման բազաների և սկզբնական արժեքների որոշման նպատակով ԿԲ կուրսի կիրառման հարցերի կարգավորումները քննարկելն է:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը խորհրդի աշխատակարգին անդրադարձավ՝ նշելով, որ անհրաժեշտ է մի քիչ հստակություն մտցնել աշխատակարգի վերաբերյալ: Նախ, նիստի ընթացքում բարձրացված հարցի մասին, որը չի վերաբերում նախագծերին, հաջորդի նիստին արդյունքի վերաբերյալ ներկայացվի տեղեկատվություն՝ արդյոք խնդիրը կարգավորվել է, թե ոչ կամ բարձրացված խնդրի հետ կապված ինչ որոշում է կայացվել: Երկրորդ, նշեց, որ ցանկանում է իմանալ ՊԵԿ նախագահի նկատառումը այն մասին, թե վերջինս խորհուրդն ինչպես է տեսնում՝ աշխատանքային գործընկերային, թե որպես կարծիքներ լսելու ձևաչափ: Միաժամանակ, նշվեց, եթե որևէ հարցի շուրջ կոնսենսուս կա, առաջ է տրվում անկախ այն հանգամանքից ՊԵԿ-ը համաձայն է, թե ոչ: Վերջինս, առաջարկեց, որ ՊԵԿ-ի կողմից մշակված բոլոր նախագծերը բացառապես քննարկվեն խորհրդի նիստում, նոր առաջ տրվեն և ոչ թե հանրային քննարկման դրված նախագծի կարևորությունից ելնելով՝ վերջինս քննարկման առարկա դարձնել խորհրդի նիստում: Նշվածի վերաբերյալ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Վ. Մխիթարյանը նշեց, որ և

կարծիք լսելն է շատ կարևոր, և արդյունքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը: Միաժամանակ, նշվեց, որ բարձրացված շատ հարցերի լուծումը որոշակի ընթացակարգ, ժամանակ է պահանջում: Բացի այդ, ներկայացված հարցերից շատերը լայն շրջանակ են ընդգրկում, որոնց ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ և ավարտից հետո կարելի է արդյունքների մասին տեղեկացնել: Նշվեց նաև, որ անհասկանալի է այն դիտարկումը, որ եթե ինչ-որ հարցի շուրջ ձևավորվել է կոնսենսուս և ՊԵԿ-ը դեմ է, ապա պետք է առաջ տրվի: Այդ դեպքում ինչպես է ստացվում, որ ձևավորվել է կոնսենսուս, եթե ՊԵԿ-ը համաձայն չէ:

ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ շատ հարցեր կան, որ շատ լոկալ են ու վերաբերում են կոնկրետ դեպքերի և այդ հարցերը կարող են քննարկվել ոչ թե խորհրդի ձևաչափով, այլ աշխատանքային կարգով: Վերջինս առաջարկեց, որ խորհրդի նիստերի ժամանակ առաջին հերթին քննարկվեն օրենսդրական նախաձեռնությունները (օրենքի, օրենսգրքի փոփոխություններ) և նաև այն հարցերը, որոնք ավելի ընդգրկուն են, վերաբերում են շատ հարկ վճարողների: Միաժամանակ, առաջարկվեց, որ խորհրդի անդամները ևս ներկայացնեն հարցեր նիստի ժամանակ քննարկելու համար: ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց նաև, որ նիստը արտահերթ է և ավելին օրակարգում ներառված նախագծերը դեռ չեն քննարկվել:

Վերջինս, անդրադառնալով օրակարգի առաջին հարցին, ներկայացրեց նախագծով նախատեսվող կարգավորումները, մասնավորապես՝ նշվեց, որ ՀԴՄ կիրառող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում պարտավոր են ՀԴՄ-ի միջոցով կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով ապահովել այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան՝ այդ նույնականացման միջոցները սկանավորելու և ՀԴՄ կտրոն տպագրելու միջոցով: Նշվեց նաև, որ նույնականացման միջոցների տրամաբանությունը ապրանքի հետագծելիության ապահովումն է, որը կբերի արտագնա ստուգումների քչացմանը այդ մասով և ամբողջական վերահսկողություն կլինի: Վերջինս նշեց նաև, որ շրջանառվում է նախագիծ, որով նախատեսվում է 2025թ. հունիսի 1-ից և սեպտեմբերի 1-ից նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար

նախատեսված ժամկետները հետաձգել 2026 թվականի հունվարի 1, այսինքն՝ այդ ապրանքները մինչև 2026թ. հունվարի 1-ը կարող են դրոշմավորվել դրոշմապիտակներով: Միաժամանակ, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ գործող կարգավորումների շրջանակներում հստակ չէ, թե ինչպես և երբ պետք է ապրանքների վրա փակցված նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունն ուղարկել հարկային մարմին, մասավորապես՝ երբ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների դեպքում վաճառքն իրականացվում է մաս-մաս: Հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում ալկոհոլային խմիչքները, որոնք դրոշմավորվում են նույնականացման միջոցներով, հաճախ վաճառվում են բաժակներով/գրամներով: Մեկ այլ դեպքում՝ հյուրանոցների համարների մինիբարերում տեղադրվում են նույնականացման միջոցներով դրոշմավորված խմիչքներ, որոնց դեպքում դրանց արժեքը ներառվում է հյուրանոցային կեցության արժեքի մեջ: Նշվածի հետ կապված նախատեսվում է, որ տեղեկության փոխանցումն իրականացվի մինչև սպառումը՝ ցանկացած փուլում, երբ հարմար է տնտեսվարողին: Այս մասով նախագծով նախատեսվում է, որ Կառավարության սահմանած դեպքերում և կարգով՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան կիրականացվի էլեկտրոնային եղանակով՝ համապատասխան հավելվածի միջոցով:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանն անդրադարձավ նույնականացման միջոցի գնին՝ նշելով, թե ինչու պետք է տնտեսվարողը վճարի: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ վերջիվերջո բյուջեի փողն էլ է հանրության փողը: Միաժամանակ, որոշակի կարծիքներ կան, թե ինչու պետք է պիտակի համար վճարեն նրանք, ովքեր չեն օգտվում, օրինակ՝ ծխախոտից կամ ալկոհոլից: Բացի այդ, այդ գինը ներառվում է ապրանքի ինքնարժեքի մեջ և գնորդի վրա է վերջնական բեռը դրվում: Նշվածի մասով Փ. Թադևոսյանը նշեց, որ նախագիծը ներկայացրել է ՊԵԿ-ը ու լիազոր մարմինը և որոշողը, ըստ էության ՊԵԿ-ն է եղել: Բացի այդ, դրոշմապիտակը փոխարինվում է QR-կոդով, որը հանդիսանում է հարկային հսկողության գործիք և դրա

համար վճարում են հարկ վճարողները: ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ բարձրացված հարցը քննարկվել է և առաջարկեց օրակարգում ներառված նախագծերն քննարման առարկա դարձնել:

Հաջորդիվ ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ նախատեսվում է սահմանել, որ յուրաքանչյուր նույնականացման միջոցը շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվություն հարկային մարմին չփոխանցելու կամ յուրաքանչյուր փաստացի փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է 30 հազար դրամի չափով: Ընդ որում, սահմանված տուգանքների հանրագումարը յուրաքանչյուր ստուգման ակտով չի կարող գերազանցել 10 միլիոն դրամը:

Խորհրդի անդամները օրակարգի առաջին հարցի վերաբերյալ բարձրացրեցին հետևյալ հարցերը.

ՓՄՁ ասոցիացիայի ներկայացուցիչ Տ. Քեյանը մի քանի հարց բարձրացրեց: Առաջինը նշեց, որ նախագծի երկրորդ հոդվածով նախատեսվում է, որ ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վաճառքի դեպքում նույնականացման միջոցների քանակը և նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում նույնականացման միջոցների հիման վրա հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համար: Նշվածի հետ կապված հարցրեց, թե օրինակ՝ եթե վաճառվում է 10 հատ ջուր, ապա ՀԴՄ կտրոնի վրա նույնականացման միջոցների քանակը նշվում է 10 և այդ ապրանքների QR-համարները: Վերջինիս ի պատասխան, ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը նշեց, որ ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է նշված ապրանքների QR-ների հիման վրա գեներացված ստուգիչ համար, որը կարող է օգտագործել հարկային տեսուչը:

Երկրորդը անդրադարձավ պատասխանատվության չափին՝ նշելով, որ մինչև ամբողջական համակարգի ներդրումը հարկ վճարողները չտուգանվեն: Սկզբնական շրջանում կիրառվի նախազգուշացում, քանի որ տեխնիկական խնդիրների պատճառով տուգանելը ճիշտ չէ, եթե տպագրվել է ՀԴՄ կտրոնը: Վերջինս ներկայացրեց դեպք, երբ տնտեսվարողը տեխնիկական խնդրի պատճառով չի կարողացել փոխանցել տեղեկությունը հարկային մարմին, որի հետևանքով ենթարկվել

է պատասխանատվության: ՓՄՁ ասոցիացիայի ներկայացուցիչ Տ. Քեյանը նշեց նաև, որ նախատեսվող տուգանքի չափը շատ մեծ է նույնիսկ ավելին, քան «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար նախատեսված տուգանքը և ավելին վերջինս հավասարեցվել է ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջների խախտման տուգանքի չափին: Միաժամանակ, նշվեց, որ տուգանքի նման չափի սահմանումը համաչափ չէ: Վերջինս առաջարկեց, որպեսզի տուգանքի չափը սահմանվի 5000 դրամ, իսկ առավելագույն շեմը՝ 300 հազար դրամ՝ հաշվի առնելով, որ հիմնական նպատակը ոչ թե տնտեսվարողին պատժելն է, այլ համակարգի ներդրմանը նպաստելը:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ տուգանքի չափը նախատեսված է այնքան, որ զսպի մեծ խախտումներ թույլ տվողներին, որպեսզի համակարգը չաղավաղվի: Նշվեց նաև, որ տուգանքի ավելի փոքր չափի սահմանման պարագայում տնտեսվարողները կնախընտրեն տեղեկությունները հարկային մարմին փոխանցելու փոխարեն վճարեն տուգանք: Հաջորդիվ, նշվեց նաև, որ քննարկվել է նաև առանձին դեպքերի համար տուգանք նախատեսելը, սակայն նման կարգավորման նախատեսումը լրացուցիչ բարդություններ կառաջացնի թե հարկ վճարողի, թե հարկային մարմնի համար՝ առաջին, երկրորդ դեպքերը որոշելու հարցերի մասով:

ՓՄՁ ասոցիացիայի ներկայացուցիչ Տ. Քեյանը հարցրեց, թե ինչ ստուգման միջոցով է հայտնաբերվելու խախտման փաստը: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ այդ մասով կնախատեսվեն կարգավորումներ:

Հաջորդիվ ՓՄՁ ասոցիացիայի ներկայացուցիչ Տ. Քեյանը հարցրեց, թե արդյոք մինչև 100 գրամ (ներառյալ) կամ 100 գրամից առավելագույնը 10 տոկոս շեղումով պարունակություն ունեցող ապրանքների դրոշմավորման մասով նախատեսված կարգավորումները կիրառվելու են նույնականացման միջոցների կիրառման դեպքում՝ չնայած այն հանգամանքին, որ անուղղակիորեն նշվում է, որ դրոշմավորվման կարգավորումները կիրառելի են: Սակայն դրանք մի օր վերանալու են և արդյոք ճիշտ չէ նախագծով նախատեսել փոփոխություն այդ մասով: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ

նախագահի տեղակալ Հ. Սահակյանը բարձրացված հարցերի հետ կապված նշեց, որ մինչև 100 գրամ (ներառյալ) կամ 100 գրամից առավելագույնը 10 տոկոս շեղումով պարունակություն ունեցող ապրանքների մասով օրենսգրքով դրոշմավորման հետ կապված կարգավորումը կիրառելի է նաև նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման դեպքում: Ինչ վերաբերում է փոփոխություն նախատեսելուն, նշվեց, որ երբ չգործեն օրենսգրքով նախատեսված կարգավորումները, այդ դեպքում նոր կնախատեսվի փոփոխություն:

ՎՋԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհուրդի ներկայացուցիչ Հ. Պատվականյանը նշեց, որ ՀՀ կառավարության 03.12.2020թ. N1976-Ն որոշմամբ սահմանված է, որ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում այդ ապրանքների վրա առկա հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվությունը չփոխանցելը հարկային մարմնի միասնական շտեմարան համարվում է ՀԴՄ կիրառության կանոնների խախտում: Վերջինիս հետ կապված՝ հարցրեց, թե արդյոք նախատեսվում են որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ հաշվի առնելով, որ նախագծով հարկային մարմին տեղեկությունները չփոխանցելու համար նախատեսվում է առանձին պատասխանատվություն: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ օրենքի ընդունումից հետո համապատասխան փոփոխություն կկատարվի կառավարության որոշման մեջ:

Հաջորդիվ, ՎՋԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհուրդի ներկայացուցիչ Հ. Պատվականյանը հարցրեց, թե արդյոք ՀԴՄ կիրառության կանոնների խախտման տուգանքների մասով կատարվել է վերլուծություն, արդյոք տարանջատված է, թե խախտման որ դեպքերն են գերակշռում, փոքր խանութների մասով խախտումները, թե այլ դեպքերն են գերակշռում: Միաժամանակ, հարցրեց, թե արդյոք վերլուծության արդյունքներով է պայմանավորված տուգանքի 10 մլն դրամ շեմի սահմանումը: Նշվեց նաև, որ եթե տնտեսավարողներն արդեն տուգանվել են, ապա արդյոք նշված մոտեցումը հետադարձ ուժ պետք է ունենա: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ թվային վերլուծություն չունեն և ՀԴՄ խախտումներն ավելի շատ փոքր գումարներ են: Տուգանքի շեմը չիջեցնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ չափը պետք է զսպի մեծ խախտումներ

թույլտվողներին, որպեսզի չաղավաղվի հետազոտելիությունը: Ինչ վերաբերում է հետադարձ ուժ նախատեսելու հարցին, նշվեց, որ ակտերը չեն վերահաշվարկվելու:

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ.Համբարձումյանը հարցրեց, թե արդյոք ներկայացվածի մասով իրականացվել են իրազեկումներ: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Վ. Մխիթարյանը նշեց, որ կարգավորումների ընդունումից հետո կիրականացվեն իրազեկման աշխատանքները:

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ. Համբարձումյանը նշեց, որ մի քանի հարցեր ունեին գործող կարգավորումների շրջանակներում մասնավորապես՝ հանրային սննդի ոլորտում, ներքին սպառման դեպքերում ապրանքների վրա փակցված նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունն հարկային մարմին ուղարկելու հետ կապված: Նշվեց, որ քննարկումից պարզ դարձավ, որ նշված դեպքերի մասով նախատեսվում է կառավարության որոշմամբ նախատեսել կարգավորումները: Հաջորդիվ հարցրեց, թե արդյոք ՀՀ հարկային օրենսգրքի 396-րդ հոդվածով սահմանված կարգավորումները վերաբերում են նաև նույնականացման միջոցներին: Գործնականում QR-կոդերը ետ վերադարձնելու հնարավորություն առկա է, թե ոչ և նշված հոդվածի որ կարգավորումներն են կիրառելի նույնականացման միջոցների դեպքում: Նշվածի հետ կապված, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ եթե QR-կոդերը ստացել են և չեն օգտագործել, ետ չեն վերադարձվում և չվերադարձնելու համար տուգանք չկա:

ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ ինչպես հասկանում է, ցանկանում են, որ տուգանքի չափը նվազեցվի, այդ թվում՝ և 30 հազար, և 10 մլն չափը: Միաժամանակ, հարցրեց, թե կարող է խնդիրը ստուգման ժամանակահատվածի կարգավորմամբ հարցին լուծում նախատեսելն է:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ հետազոտելիությունը ամենակարևոր հարցը չէ երկրում և հարկերը չթաքցելն շատ ավելի կարևոր է: Նշվեց նաև, որ այն դեպքերում, երբ ՀԴՄ կտրոն տպագրվում է և զուտ տեղեկություն չփոխանցելու համար տուգանելը համարում է անարդար և առաջարկեց տուգանքի չափը 30 հազար դրամի փոխարեն նախատեսել 5 հազար դրամ: Նշվեց

նաև, որ ինչպես ցույց է տալիս փորձը ինչ-որ դեպքերի համար կաննոններ սահմանելով հիմնականում տուգանվում են փոքր և միջին տնտեսվարողները, որոնք տեղյակ չեն լինում:

ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանն էլ պատասխանատվության չափի կիրառման հարցի հետ կապված առաջարկեց, որ տուգանքի չափը նախատեսվի դեպքերի համար, օրինակ՝ խախտման առաջին դեպքի համար սահմանվի 30 հազար անգամ ապրանքի քանակ ոչ ավել քան 300 հազար դրամ, երկրորդ դեպքի համար՝ 30 հազար անգամ ապրանքի քանակ ոչ ավել քան 3 մլն դրամ և այլն:

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ.Համբարձումյանն էլ առաջարկեց խախտման առաջին դեպքի համար նախատեսել նախազգուշացում: Վերջինիս ի պատասխան, Հ. Սահակյանը նշեց, որ նախազգուշացում նախատեսելը նպատակահարմար չէ, քանի որ ռեսուրս է ծախսվում և նշեց, որ առաջին խախտման դեպքի համար կարող է նախատեսվել տուգանքի գոնե փոքր չափ:

Հաջորդիվ անդրադարձ կատարվեց օրակարգի 2-րդ հարցին, որի վերաբերյալ ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ հիմնականում նախատեսվող կարգավորումները վերաբերում են հարկային օրենսգրքի 16-րդ հոդվածին՝ արտարժույթով արտահայտված գործարքների շրջանակներում հարկման բազաների և սկզբնական արժեքների որոշման նպատակով ԿԲ կուրսի կիրառման հարցերի կարգավորմանը: Վերջինս նշեց, որ նախագծով, մասնավորապես՝ նախատեսվում է փոխարժեքի կուրսը կիրառել այն կուրսը, երբ իրականացվել է գործարքը, այսինքն՝ հաշվեգրման տրամաբանությամբ՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պահը համարվող օրվա դրությամբ՝ այդ օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Նշվեց նաև, որ արտահանման և ներմուծման մասով կան որոշ հարցեր, որոնց մասով կարգավորումներ նախատեսելու համար անհրաժեշտ է քննարկել: Միաժամանակ, վերջինս խորհրդի անդամներին հարցրեց, թե արդյոք ընդունելի են նախագծով նախատեսվող կարգավորումները:

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ նախագահ Վ. Համբարձումյանը, հարցրեց, որ եթե հանվում է 16:00-ն, ապա պարզ չէ, թե տվյալ օրվա որ փոխարժեքը պետք է կիրառել: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ հիմք է ընդունվում գործարքի կատարման օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած այդ օրվա փոխարժեքը:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, որ հաշվապահական հաշվառման իրական ժամանակում վարման տեսանկյունից առաջարկվող կարգավորումը առաջացնում է խնդիր, քանի որ ձևակերպում չեն կարողանում իրականացնել, քանի դեռ այդ օրվա փոխարժեքը չի հրապարակվել: Միաժամանակ, նշվեց որ նախագծի կարգավորումներում նշվում է «հարկման բազայի, սկզբնական արժեքի, եկամուտների որոշում» ձևակերպումը, մինչդեռ ծախսերի մասով նշում չի կատարվում: Վերջինս նշեց նաև, որ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սկզբնական արժեքների որոշման հետ կապված նախագծով նախատեսվում է առանձին կարգավորում և դա հակասում է ներմուծման և արտահանման դեպքում սահմանված կանոնին, քանի որ այդ դեպքում ևս կա դեբիտոր, կրեդիտոր: Նշվածի մասով առաջարկեց այդ կետը հանել: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ նշված դիտարկումները հաշվի կառնվեն:

«Իրազեկ հարկատու» ՀԿ նախագահ Ա. Մալխասյանը հարց բարձրացրեց կապված՝ նախագծով նախատեսվող հարկային գործակալի բացակայության դեպքում՝ հարկման ենթակա եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներից հարկի գումարի (այդ թվում՝ օտարերկրյա պետություններում գանձված հարկերի) հաշվարկման հաշվառման մեթոդի հետ: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ նախագծի նշված կետով նշվել է «հաշվառման մեթոդ» ձևակերպումը, որպեսզի այն դեպքում, երբ հաշվեգրում է, կիրառվի հաշվեգրման մեթոդը, որ դեպքում դրամարկղային է, կիրառվի այդ մեթոդը:

Նախագծով նախատեսվող կարգավորումների վերաբերյալ ներկայացված դիտարկումներից ելնելով՝ ՊԵԿ նախագահի տեղակալ Հ. Սահակյանը նշեց, որ որպես ընդհանուր կանոն կսահմանվի, որ հիմք է վերցվում նախորդ օրվա փոխարժեքը և

բացառություն կնախատեսվի արտարժույթի փոխարկման գործարքների համար, որոնց մասով հիմք կընդունվի տվյալ օրվա փոխարժեքը:

Միաժամանակ, նշվեց, որ նախագիծը այլ գերատեսչությունների կարծիքի չի ներկայացվել, նույնիսկ չի քննարկվել ՀՀ ֆինանսների նախարարության հետ և ներկայացված կարծիքների հիման վրա կլրամշակվի և եթե շատ գլոբալ փոփոխություններ լինեն, ապա ևս մեկ անգամ կքննարկվի կամ կուղարկվի կարծիքի:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ստորագրող
ՎՐԵԺ ՄԽԻԹԱՐՅԱՆ
2108770623

2025-05-26 10:55:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՎՐԵԺ ՄԽԻԹԱՐՅԱՆ